ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի փետրվարի 1-ից մինչև փետրվարի 27-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Էմմա Քյուրքչյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ մասնագիտական աշխատանքներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականության աջակցմանը, ծառայությունների մատուցման գործընթացների ուսումնասիրությանը և ոլորտային ծրագրերի իրականացման աշխատանքներին: Աշխատանքները կատարվել են բաժնի գործունեության ուղղություններին համապատասխան:

- Իրականացրել եմ հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և սոցիալ վերականգնողական ծառայությունների մատուցման վերաբերյալ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված («Աստղավարդ» ՀԿ, «Աուտիզմ ազգային հիմնադրամ» «Երջանկության ճանապարհ» ԲՀԿ, «Լիարժեք կյանք» ՀԿ, «Փրկություն» ԲՀԿ) հաշվետվությունների ընդունման, հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների և համապատասխան գրությունների կազմման աշխատանքներ:

- Շարունակվել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ: Կայացել են մի շարք հանդիպումներ և քննարկումներ միջազգային գործընկերների հետ:
- Բաժնի պետի հանձնարարությամբ կազմվել են գրություններ, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր, իրականացվել են ընթացիկ աշխատանքներ, ինչպես նաև պատրաստվել են առաջարկություններ և եզրակացություններ՝ բաժնի գործառույթներից և խնդիրներից բխող:
- Հաշվետու ամսվա ընթացքում մասնակցություն եմ ունեցել ապաինստուցիոնալացմանն ուղղված աշխատանքներին, մասնավորապես՝ համայնքային ծառայությունների զարգացման շրջանակում իրականացվող նախաձեռնություններին: Այդ համատեքստում ներգրավված եմ ՀՀ Արմավիրի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսվող անկախ կյանքի կենտրոնի ստեղծմանն ուղղված աշխատանքներին:
- Քաղաքացիների դիմում-բողոքների ուսումնասիրման և արձագանքման աշխատանքներ: Վերլուծվել և ուսումնասիրվել են քաղաքացիների դիմումները, տրամադրվել են անհրաժեշտ պարզաբանումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, արտոնությունների և պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ:

07.04.2026թ.

Փորձագետ՝ Էմմա Քյուրքչյան